

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք օ ն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ՆՐՇՐՈՒՆՐ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր ըստին 2 կոպէկ.
Տ է Լ է Ք օ ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է մշակել միջոցներ.—Ներքին Տե-
ստիքի մէջ. Մասնաւոր հաշուից. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին
լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
թԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Յովհաննէս Այ-
վազյանի:

ՊԵՏԻ ԵՄԵԱԿԵԼ ՄԻՋՈՑՆԵՐ

Վերջ չը կայ այն զանգամներին, որ
լուրում են մեր բաղադրից եւ գիւղերից
մէկը ընկնել թանգու թան մասին:
Թանգուներ են հայը, միսը, ձունը, բրինձը,
խոտը եւ ուրիշ առարկաներ, որոնք հար-
կաւոր են թէ մարդկանց ապրուստի եւ
թէ կենդանիներ կերակրելու համար:
Դժուարացել է կենսը ամենքի հա-
մար, բայց մանաւանդ այն մարդկանց հա-
մար, որոնք ապրում են քիչ վարձատրու-
թեամբ եւ սահմանափակ ունեւորով եւ ու-
րոյց ստացածը հազիւ հազ բաւականու-
թիւն էր տալիս առօրեայ ամենատանհա-
մելու պահանջներին:

Թանգութեան պատճառները սակայն
չափ անգամ լինում են արհեստական
հանգամանքներ, որոնց կարելի է հեշտու-
թեամբ հեռացնել, եթէ մարդիկ մաքա-
ր են նրա գէտ խելացի միջոցներով: Այնչե-
ք է կարելի ասել այն բանի դէմ, որ, օրի-
նակ, բրինձը թանգացել է, որովհետեւ
անցեալ 1899 թւին բրինձի ցանքերը թէ
Անդրկովկասում եւ թէ Պարսկաստանում,
որտեղից ենք նոյնպէս ստանում ենք բը-
րինձ, սաստիկ վնասակար երաշտից եւ
մեծ մասամբ փչացան: Բնականաբար, պէտք
է զգուշանալ բրինձի պահեստութիւն եւ նա
պէտք է թանգանաւ: Այդ տեսակ անաշու-
ք էր եւ խոտի բերքը, որ ունի մի եւ նոյն
ժամանակ եւ այն անյարմարութիւնը, որ

այդ առարկան դժուար է բերել տալ հե-
ռաւոր տեղերից, ուր նա էփան է եւ ա-
ռատ:

Իսկ լճի կամէք այն բանին, երբ հայը
թանգանում է այնտեղ, ուր հայի մեծ
պահեստներ կան եւ ուր հազիւ պաշար-
ներ են ժողովված ապագայում թանգ դը-
նով ծախելու համար: Կամ ի՞նչպէս կա-
րելի է հաշտվել այն հանգամանքի հետ,
երբ գիւղացիները ստիպված էփան գնով
ծախում են իրանց կենդանիներին, իսկ
վաճառանոցում մաքուր ծախում է մի-
սը շատ բարձր գներով:

Այսպիսի դէպքերում հասարակութիւնն
ինքն է մեղաւոր, որ նա չէ ձեռնարկում
մի շարք միջոցների կոտորելու վաշտառու-
ների մեքենայութիւնները եւ ազատելու
սպառողներին մթերքների թանգանալու
ծանր լուծից: Այս ձեռնարկ սկզբից, ինչ-
պէս յայտնի է մեր ընթերցողներին, Նիւ-
էանի հայապաճառները իրանց ձեռքն էին
գցել հայի գլխաւոր պաշարները եւ պատ-
րաստվել էին մեծապաճառութիւն հաս-
տատելու հայի վաճառման գործում: Աս-
կայն տեղական բաղադրից վարչութեան
աջողից նախատեսել այդ հանգամանքը եւ
հայի թանգութեան առաջին առնել սե-
փական հայի պաշարների համար որոշ
գումար նշանակելով:

Վարչապետը, ուր այս ձեռք զգացվում
էր բարձր ու խիստ սաստիկ թանգութիւն,
տեղական բարձր իշխանութիւնը բերել
տուեց քարածուխի հանքերից երեք երկա-
թուղիական գնացքով վառելիքի ահազին
պաշար եւ կարգադրեց վաճառելու այն
գնով, ինչքան որ նա ստույգ է իշխանու-
թեանը: Այդպիսով աջողից ազատել աղ-
գանակութիւնը քարածուխի արհեստական
թանգանալուց:

Թիֆլիսի քաղաքային ղուկայում գործող
մի յատուկ յանձնաժողով, որը զբաղված է

մի սակագինը ընկելու հարցով, մշակել է
մի ծրագիր կանոնադրելու մի գնահա-
տութիւնը, բանալով քաղաքի կողմից սե-
փական մեծ խանութները եւ վաճառել այն-
տեղ միսը այն գնով, ինչքան որ նա կը
նստի քաղաքային վարչութեան: Իբրեւ ա-
պացոյց, որ կարելի է էփանացնել մթ-
թերքների գները, կարող է ծառայել Թիֆ-
լիսում գոյութիւն ունեցող սպառողների
այն ընկերութիւնը, որ հաստատված է
երկաթուղու ծառայողների համար եւ որ
իսկապէս վաճառում է մթերքները աւելի
էփան գնով, քան Թիֆլիսի վաճառանոցը:
Մաքառելու միջոցներ կարելի է մշակել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

«Մշակ» այսօրվայ համարի մէջ տպագրում
ենք Բագուի մեր թղթակցի նամակը հանգու-
ցեալ Ենուք Բուդաղեանի կողմից մասին: «ՃԱՅ-
ՈՒՄ» լրագիրը, տպագրելով մի եւ նոյն տեղե-
կութիւնները, աւելացնում է իր կողմից:

Առտուճու առճարում, առանձնացած վաճա-
քի մէջ, գիւղական դպրոցից մինչեւ համա-
լսարան, հիւանդանոցներում եւ բանտերում
տանկվողների չընանում, զանազան ազգու-
թիւնների պատկանող երիտասարդ եւ դա-
ռառակ մարդիկ, սկսած գիւղական բնակիչ-
ներից եւ վերջապէս հասարակական գոր-
ծիչների չընանում, ամէն տեղ, ուր գոյու-
թիւն կունենան Ենուք Բուդաղեանի առատ
նոյրաբերութիւնները ստեղծված կրթական
եւ բարեգործական հիմնարկութիւններ, այդ
անունը կարտասանվի եւ կը յիշատակվի
պատկառմանով եւ հարգանքով: Սա
—ամենալուսաւ եւ ճշմարիտ-մարդկային յու-
շարժան է նրանց համար, որոնց տրված է
կարողութիւն այդպիսի յուշարձանների կա-
ռուցանելու: Դրեք, հարուստ մարդիկ, որ-
քան կարելի է շատ այդպիսի յուշարձաններ
եւ արանց մէջ ձեռնարկ ամէն մէկը կը գտնէ

ամենալուսաւ բաւարարութիւն իր անողջ
կենքի, պատուի եւ անուան համար...

Այս բոլորը մի սուրբ ճշմարտութիւն է:
Հանգուցեալ Բուդաղեանի մէջ միացած են
երկու թանգագին յատկութիւններ, որոնց
պէտք է ճիշդով որոնել ժամանակակից հասա-
րակութեան մէջ—բարեբարի առատաձեռնու-
թիւն եւ ինքնաձեռնաչ մարդու համեստութիւն:
Կտակել կէս միլիոնից աւել գումար եւ պա-
տուիրել, որ իրան թաղեն առանց աղմուկների,
առանց չքեղ ծէսերի, նոյն իսկ հոգ տանել, որ
գերեզմանաքարը համեստ ու հասարակ լինի—
սա մի գերազանց յատկութիւն է, որ մեզ պէս
մի ցուցամուղ ազգի մէջ միայն հիացմունք կա-
րող է պատճառել: Պակաս հիացմունք չեն
պատճառում եւ այն լայն հայեացքները, որ
մտնել է այդ իսկական բարեբարի իր կար-
գործութիւնների մէջ, մի հանգամանք, որի
վրա չենտէլ է եւ մեր թղթակցից: Տալով իր
ազգին, Բուդաղեան չէ մոռացել եւ այն ազ-
գութիւնները, որոնք մեզ հետ միասին են ապ-
րում: Ուրեք, վրացիներ, թուրքեր նոյնպէս կօդո-
վեն նրա բարեբարութիւններից. դա ազգերի
խաղաղ եղբայրակցութեան մի յաղթանակն է,
եւ մենք, որ այդ գաղափարի երկրպագուներն
ենք, չենք կարող մի առանձին գոհութեամբ
չարձանագրել այդ փաստը: Մի փաստ է դա,
թէ եւ անհատական, բայց շատ պերճաբոս
փաստ, որ հայը կարողանում է բարձրանալ
ազգայնական, դասակարգային նախապաշար-
մունքներից, կարողանում է ցոյց տալ, որ
իր մէջ մարդկային հոգի ունի, մի հոգի, որին
խորթ չէ այն ամենը, ինչ մարդկային է: Ենուք
Բուդաղեանը միայն իր անհատական պատիւը
չէ բարձրացրել, այլ եւ իր ցեղակիցների պա-
տիւը: Եւ մեզ միայն մնում է ցանկալ, որ հայ
մեծաւորները կարողանայ իր ապօրինաւոր դա-
սակցի արածը ամրացնել աւելի շատ փաստե-
րով:

Քանի որ մեր խօսքը այդ կտակի մասին է,
չենք կարող, իբրեւ գրական գործին ծառայող-
ներ, մոռացութեան տալ այն վերին աստիճա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

II

Ծովային այդ առաջին ճանապարհորդութիւ-
նը Այվազովսկու վրձինին առատ ներթիւր մա-
տակարարեց: Վերադառնալով Պետերբուրգ, նա
միմեանց կտեւից մի շարք նկարներ պատրաս-
եց, որոնք արժանացան Նիկոլայ I-ի ուշադ-
րութեան: Կայսրը իր հօր հովանաւորութեան
տակ առաւ նրան: Երիտասարդ աղաքանդ զարմա-
նալի թոխչներ էր գործում. նա իր նկարների
համար ստացաւ ոսկէ մեդալ, որ իրաւունք էր
տալիս նրան ժամանակից առաջ ուղեւորվել
արտասահման պետական հաշուով:

1840 թւականին Այվազովսկին ուղեւորվեց
արտասահման եւ ամենից առաջ այցելեց, ի
հարկէ, Իտալիան, գեղարուեստի այս կրաւի-
թանգը: Նա ճանապարհորդեց Իտալիայի զանա-
զան կողմերը, այցելեց եւ Հռոմը: «Ես տեսայ
Բաֆայէլի եւ Միքէլ Անջելոյի ստեղծագործու-
թիւնները,—գրում էր նա Հռոմից իր մի բա-
րեկամին—տեսայ Կոլդէջը, Պետրոսի եւ Պե-
դրոսի եկեղեցիները եւ այլն եւ այլն: Նայելով հան-
ճարների արտագործութիւններին—զգում եմ քո
ոչնչութիւնը: Այստեղ մի օրը մի ամբողջ տարի
արժէ: Ես, մեղուկ պէս, ծաղկանոցից մեղր եմ
ծծում, որպէս զի չորսապարտ հարկ մատու-
ցանք թագաւորին եւ մայր Ռուսաստանին»:

Եւ իրաւ, Իտալիայի երկրքի տակ Այվա-
զովսկու վրձինը սկսեց դիւթել, միանգամից
հռչակելով նրա անունը: Նրա «Փոթորիկ»,
«Բառա», «Նեպոլիտանեան գիշեր» պատկեր-

ները հիացմունք պատճառեցին պատկերահա-
նդէսում: Ահա ինչ էր գրում «Художественная
Газета» լրագիրը:

Հռոմում եւ Նեպոլիտանում ամենքը խօսում են Այվա-
զովսկու պատկերների մասին: Նեպոլիտանում այնքան
սիրելի են նկարչին, որ նրա տունը ամբողջ օրը
լի էր այցելուներով: Մեծաւորները, բանաստեղծ-
ները, գիտնականները, նկարիչները եւ տուրիստնե-
րը նրան փառաբանում են, հիւրասիրում են եւ, երբե-
քան իրան օտարների մէջ, ընդունում են, որ
նա հանճար է: Նոյն իսկ Նեպոլիտանեան թագա-
ւորը մի քանի անգամ միջոցով ցանկութիւն
լաւտեց տեսնել իրանց նկարչին եւ նրա հրաշալի
պատկերները: Նորին Մեծութիւնը երկու քառուկ էր
Այվազովսկու հետ եւ գնեց նրա մի պատկերը, որ
նկարագրում է Նեպոլիտանեան նաւատորմը: Ի
պատիւ նրա Նեպոլիտան լոյս տեսան շատ օտարա-
ւորներ: Հռոմի պատկերահանդէսում Այվազովսկու
պատկերները առաջնակարգ են ընդունված: «Նեպ-
ոլիտանեան գիշերը», «Փոթորիկը» եւ «Բառա» այն-
քան աղմուկ բարձրացրին գեղարուեստի մայրաքա-
ղաքում, որ մեծաւորների զանգվածները, հասարակա-
կան ժողովաւորները եւ արտիստները չընանալ
փառաբանում են նրան: Լրագիրները ողբերկած գո-
վասանքներ են թնգացնում եւ ամենքը միաբերան
ասում եւ գրում են, որ մինչեւ Այվազովսկին ոչ ոք
գեռ այնպէս ճիշդ եւ կենդանի կերպով չէ նկարել
լուրը, օդը եւ ջուրը: Պարզ գնեց նրա «Բառա» պատ-
կերը եւ զրեց Վատիկանում, ուր ընդունվելու բաղ-
դին արժանանում են միմյան աշխարհի ամենաա-
ռաւակարգ նկարիչների արտագործութիւնները: «Բա-
ռա» պատկերացումը—այսպէս է ընդհանուր կար-
ծիքը—նշանաւոր է իր նոր գաղափարով եւ ճանաչ-
ված է արուեստի հրաշալիք: Նորին արքայութիւն Պա-
պը կամեցաւ անպատճառ տեսնել Այվազովսկուն,
տեսնաւ նրան եւ ի նշան իր ամենաձեռն բարեհաճու-
թեան շնորհեց նրան ոսկէ մեդալ: Փարսիական
զեպպան դուք գը—Մօսկոյեթիւս եւ մեր գեպպան կոմս
Գուրիւկ գնեցին Այվազովսկուց պատկերներ եւ մեծ
գին տուին:

Ինքը, Այվազովսկին, այսպէս էր բացատրում
այդ հռչակաւոր «Բառա» գաղափարը: Պատ-
կերը նկարելիս նա զեկաւարում էր իր նկար-
չական երեւակայնութիւնը ծննդոց գրքի այս
խօսքերով: «Եւ երկրի էր աներեւոյթ եւ ան-
պատրաստ. եւ խաւար ի վերայ անդնդոց. եւ
Հոգի Աստուծոյ չընէր ի վերայ ջուրոց»: Տա-

րեքներ ի մտայ խառնակութիւնը լուսաւո-
րում է գիտաւոր աստղը, որը, եթէ ուշադրու-
թեամբ դնեք, ունի իր մէջ Սաղաւթի ա-
տուածային կերպարանքի գծադրութիւնը: Մին-
չեւ Գրիգոր XVI պապին ներկայացնելով պատ-
կերը ամենաարժեք յուշարձանները զննելիս
չափ նայիսկոպտներ եւ կարգինայնելու Բայց եւ
կղերական ցեղագործները, ունենալով նոյն իսկ
ինկվիզիտորական հայեցակէտ, յախշտակված
միայն Այվազովսկու պատկերից, ինչպէս եւ
ինքը, պապը Երբ վարձատրութեան հարցը
բարձրացաւ, նկարիչը համեստութեամբ հրա-
մարվեց որ եւ ի վարձ ստանալ, առաջարկելով
«Բառա» պարգէն կաթոլիկ աշխարհի տիրոջը
եւ Հռոմին: Ոսկէ մեծ մեդալը, որ տուեց պապը,
այդ անշահախրութեան եւ տաղանդի վար-
ձատրութիւնն էր:

Ահա մի նմուշ այն գնահատութիւններից,
որոնք լոյս տեսնում իտալական լրագիր-
ներում: Մի հարուստ եւ ազնուական Նեպոլի-
տանցի, Վէլիկ անունով, որ յետոյ դարձաւ
Գարիբալդիի բարեկամը եւ թիֆլիսպաշար, գը-
րում էր հետեւեալը.

Ողբերկած մեր երկրքի եւ մեր ծովի հիանալի գոյ-
ներով, նա ի վրձին իւրաքանչիւր շարժման մէջ
մեկնակցում է իր սքանչալիքը եւ յափշտակու-
նելու Լուսնի լուսի խաղը, որի մէջ նա կամեցել է
նկարել Նեպոլիտան գիշեր ժամանակ, լի է ճշմար-
տութեամբ եւ փայլով ու այնպիսի հիացմունք է
պատճառում, որ դիտողը, յափշտակված գոյների
կարկաղական փոփոխութիւններից, ցերեկվայ մէջ
կարծես փոխադրվում է գիշերը, տեսնելով թէ ինչ-
պէս է լուսնը լուսաւորում հորիզոնից: Այվազովսկի
նկարում է միայն այն ժամանակ, երբ նրան մղում
է այդ բանին նրա կրակոտ երեւակայնութիւնը. երբ
նրա մտքի մէջ, որպէս երազի մէջ, պատկերի ամ-
բողջութիւնն է նկարվում, այն ժամանակ նա գոյ-
ները անց է կացնում կտաւի վրա—եւ պատկերը
պարտատ է:

Այվազովսկու տաղանդի մի առանձնատկու-
թիւնն էլ այն էր, որ նա զարմանալի արա-
գութեամբ էր նկարում: Այդ կողմից նրան
նմանեցնում են աշխարհահռչակ մի քանի նը-
կարիչներին, ինչպէս, օրինակ, Բուրբանս եւ

Բեմբրանտ (1875 թւին Այվազովսկին Պետեր-
բուրգում մի մեծ պատկեր նկարեց 2 1/2 ժամ
ընթացքում):

Հռոմից նկարիչը 1842 թւին գնաց Վենետիկ,
ուր ի ցոյց հանեց մի նոր նկար, որի առիթով
տեղական մի լրագիր ասաց, որ Այվազովսկու
մէջ անկասկած հանճար կայ: Վենետիկում նա
նկարեց «Լուսնային գիշերը» եւ նուրից այդ
պատկերը Միլիթրեան վաճառեց: Այվազից նա
անցաւ Պարիզ, ուր Լուվրում բացված էր
պատկերահանդէս: Չորսանկարի լրագիրները
հրճուանքով էին խօսում նկարչի մասին, հա-
զարաւոր մարդիկ խմբվում էին նրա պատկեր-
ների առաջ: Չորսանկարի խառնաւոր վար-
ձատրեց նրան երբեք կարգի ոսկէ մեդալով:
Պարիզի առաջ գեպպան կոմս Կիսկրիւկ ամենա-
սիրալիկ ուշադրութեամբ էր վերաբերվում նը-
կարչին: Պարիզից անցնելով Անգլիա, Այվա-
զովսկին ծովով գնաց Սպանիա եւ Պորտուգա-
լիա, ճանապարհորդեց Միլիթրեական ծովում
եւ նորից այցելելով Պարիզը, ճանապարհվեց
Ռուսաստան: Ամստերդամում նրա պատկեր-
ները գնեց Վիլհելմ Գալաուրը եւ Սլոյսնդա-
կան ակադեմիան նրան իր անդամ ընտրեց:

1844-ին, վերադառնալով Պետերբուրգ, Այ-
վազովսկին Նիկոլայ Կայսրի առանձին շնորհ-
ներին արժանացաւ: Պարիզում ցոյց հանված
պատկերների համար նա ստացաւ ակադեմի-
կոսի կոչումը: Կայսրը պատուիրեց նրան նկա-
րել առաջնակարգ շաւահանգիստները: Ձմեռը
նա կատարում էր այդ պատուէրները եւ Պե-
տերբուրգի բարձր շրջանները, ինչպէս նաեւ
առհասարակ բոլոր դասակարգերը, ամենամեծ
համակրանքով էին վերաբերվում նկարչին, որի
պատկերները անկեղծ հիացմունք էին պատ-
ճառում: Բայց հիւսիսային աղքատ ընտելութիւնը
չափ չէր գրաւում վառ երեւակայնութեան տեղ
գեղարուեստագէտին: Գարունը լուսաւորում
պէս նա ձգտում էր գէպի հարաւ, գէպի Սեւ
ծովի հայրենի ափերը: Եւ Նիկոլայ Կայսր
չափ անգամ էր նրան նկատողութիւններ ա-

(ԿԸ շարունակվ)

